

Ռ-85

ՀՀ ՊՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գոր Հովհաննեսի Հովհաննիսյան

ԹՈՒՐԿ-ՎՐԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ  
(1991–2008թթ.)

ԻԳ.00.04 – «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ  
բաղաձայն գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2012

---

**ИНСТИТУТ НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ  
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РА**

**Оганесян Гор Оганесович**

ТУРЕЦКО-ГРУЗИНСКИЕ ОТНОШЕНИЯ В КОНТЕКСТЕ РЕГИОНАЛЬНОЙ  
ПОЛИТИКИ  
(1991–2008гг.)

**АВТОРЕФЕРАТ**

диссертации на соискание ученой степени кандидата политических наук по  
специальности 23.00.04 – «Международные отношения»

ЕРЕВАН – 2012




հարձակումը հարգանքով և լավագույն բարեմասքերով ձեռնարկված  
հարգարժան պարունակից հոգևոր և քաղաքական

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանում

Գիտական ղեկավար՝ Լ. Ղ. Շիրինյան  
քաղաքական գիտությունների դոկտոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Ա. Գ. Ավագյան  
պատմական գիտությունների դոկտոր  
Ս. Ս. Մինասյան  
պատմական գիտությունների թեկնածու

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան  
Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012թ. ապրիլի 27-ին, ժամը 16.00-ին, ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում գործող ԲՈՂ-ի 056 մասնագիտական խորհրդի նիստում (0037, ք.Երևան, Կ. Ուլնեցու 56/6):  
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի գրադարանում:  
Սեղմագիրն առաքվել է 2012թ. մարտի 26-ին:


056 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների դոկտոր  
 Պ.Ա. Զորանյան

Тема диссертации утверждена в Российско-Армянском (Славянском) университете

Научный руководитель: доктор политических наук,  
Л. К. Ширинян

Официальные оппоненты: доктор исторических наук,  
А. Г. Авагян  
кандидат исторических наук,  
С. М. Минасян

Ведущая организация: Ереванский государственный университет  
Защита диссертации состоится 27 апреля 2012 года. в 16.00 на заседании специализированного совета ВАК 056 при Институте национальных стратегических исследований имени Драстамата Канааяна Министерства обороны РА (0037, г. Ереван, ул. К. Улнеци 56/6).  
С диссертацией можно ознакомиться в библиотеке Института национальных стратегических исследований имени Драстамата Канааяна Министерства обороны РА.  
Автореферат разослан 26 марта 2012 года.

Ученый секретарь специализированного совета 056,  
доктор исторических наук  
 Ս.Ա. Չոբանյան

I. ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է թուրք-վրացական հարաբերությունների հետազոտությանը տարածաշրջանային քաղաքականության համատեքստում և ընդգրկում է 1991-2008 թթ. ժամանակաշրջանը: Աշխատանքում փորձ է արվում քննել այս գործընթացի սկզբնավորումը, փուլերն ու արդյունքները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձված հետխորհրդային շրջանում Թուրքիայի և Վրաստանի արտաքին քաղաքական նպատակների ուսումնասիրությանը տարածաշրջանի աշխարհաքաղաքական, տնտեսական, էներգետիկ, հաղորդակցության ուղիների, էներգատարանցման, էթնիկ և ռազմավարական հիմնախնդիրների առնչությամբ, ինչպես նաև դիտարկվել է այդ հիմնախնդիրների ազդեցությունը ինչպես երկու պետությունների միջև փոխհարաբերությունների, այնպես էլ առհասարակ տարածաշրջանային քաղաքականության վրա: Հարավային Կովկասում տեղի ունեցող գործընթացներն ունեն ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ ընդգրկում՝ պայմանավորված խաղաղության պահպանման խնդրով և պետությունների զարգացման դինամիկայով եվրասիական մասշտաբով: Հարավային Կովկասի պետությունները ապրում են քաղաքական ու տնտեսական լուրջ դժվարություններ, որոնք ավելի են բարդանում էթնոքաղաքական հակամարտությունների պատճառով, և որոնցում բացահայտորեն շոշափվում են հարևան պետությունների շահերը, մինչդեռ կասպյան էներգակիրների շահագործման ու տարանցման հիմնախնդիրը ավելի մեծ մասշտաբի հակասությունների աղբյուր է, քանի որ դրանցում անուղակիորեն շոշափվում են տարածաշրջանային և համաաշխարհային դերակատարների շահերը: Այս առումով ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը վերափոխել է համաաշխարհային հանրության նորահայտ սուբյեկտների արտաքին-քաղաքական ուղղվածությունը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Հարավային Կովկասի երկրների արտաքին-քաղաքական տարաբնույթ կողմնորոշմանը, դրանով իսկ տարածաշրջանային քաղաքական օրակարգ մտցնելով բազմավեկտոր ձևաչափը, ինչը ավելի բարդացրեց տարածաշրջանի հետխորհրդային պետությունների առանց այդ էլ ծանր դրությունը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Վերոնշյալ գործընթացների հետազոտության արդիականությունը բնութագրվում է Թուրքիայի դերակատարմամբ, որն ամբողջ ուժով ձգտում էր լրացնել ԽՍՀՄ-ի փլուզումից հետո առաջացած քաղաքական վակուումը՝ դրանով իսկ փորձելով հայտարարել իր մասին՝ որպես տարածաշրջանային ուժի, որն ընդունակ է ազդելու ոչ միայն Հարավային Կովկասի, այլև առհասարակ կասպիական-կենտրոնասիական տարածքի քաղաքականության վրա:

Հայաստանի և Ադրբեջանի միջև Լեռնային Ղարաբաղի հակամարտության կապակցությամբ ստեղծված բարդ հարաբերություններով պայմանավորված՝



Վրաստանին հաջողվեց դառնալ տարածաշրջանի կարևոր պետությունը, ինչը հանգեցրեց վերջինիս նկատմամբ Թուրքիայի առանձնահատուկ ուշադրությանը:

Ավելին, Ռուսաստանի և Վրաստանի միջև հաստատված բարդ հարաբերությունների հետևանքով Թուրքիային հաջողվեց թափանցել տարածաշրջան, իսկ հետո, շնորհիվ տարածաշրջանային տնտեսական ու էներգետիկ նախագծերի, ամրապնդել դիրքերը վարելով իր արտաքին քաղաքականությունը: Թուրքիան նաև ստանձնեց Վրաստանի հովանավորի դերը սնծովյան տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններում:

Հարկ է նշել, որ 90-ական թվականների սկզբին Թուրքիայի հետաքրքրությունը Վրաստանի նկատմամբ նախապես թելադրված էր ոչ այնքան իր սեփական ռազմավարական նպատակներով, որքան ԱՄՆ-ի և արևմտյան երկրների ռազմավարական պլանի մի մասն էր ուղղված Ռուսաստանի ազդեցության նվազեցմանը տարածաշրջանում, դրանով իսկ ստեղծելով հակակշիռ ի դեմս Թուրքիայի, ինչը կնվազեցներ Ռուսաստանի դերակատարումը դարձնելով նրան վճռական դեր չունեցող պետություն: Իսկ Վրաստանի հետաքրքրությունը Թուրքիայի նկատմամբ սկզբնական շրջանում պայմանավորված էր Ռուսաստանից հնարավորինս արագ ձեռքազատվելու և արևմտյան կառույցների ինտեգրվելու ձգտմամբ, դրանով իսկ Վրաստանը Թուրքիան ընկալում էր որպես Արևմուտքի անբաժանելի բաղկացուցիչ:

Այսպիսով, թուրք-վրացական հարաբերությունների հաստատման գործընթացը հարկ է դիտարկել զուրպա քաղաքականության համատեքստում: Թուրք-վրացական հարաբերությունների զարգացման հետագա ընթացքը շատ բանով պայմանավորվեց երկու պետությունների փոխադարձ շահերով, որոնք իրականանում են անհավասար ձևաչափով՝ դրանով իսկ կասկածի տակ դնելով երկու երկրների ռազմավարական համագործակցությունն ու գործընկերությունը:

Այս հիմնախնդրի հետազոտման արդիականությունը պայմանավորված է նաև տարածաշրջանում իրավիճակի սրմամբ՝ թելադրված Հարավային Օսիայի և Աբխազիայի դեմ վրացական ագրեսիայով, Թուրքիայի փորձերով՝ իրավիճակից օգտվելով ներկայանալ իբրև տարածաշրջանային անկախ դիտորդ՝ հնարավորության դեպքում պահպանելով status quo և իր դիրքերը տարածաշրջանում:

Վերը շարադրվածից ելնելով՝ թուրք-վրացական հարաբերությունների ուսումնասիրությունը (1991-2008 թթ.) տարածաշրջանային քաղաքականության համատեքստում չափազանց արդիական է:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանը չափազանց սահմանափակ է՝ նրա արդիականության, տեսական և գործնական նշանակության համեմատ: Այս թեմայով հրապարակումների ճնշող մեծամասնությունը ընդհանրական բնույթ ունի և կենտրոնացած է առավելապես տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային դերակատարների ռազմավարական մրցակցության հիմնախնդիրների վրա, մինչդեռ թուրք-վրացական հարաբերություններն ունեն սեփական բովանդակություն, ինչպես նաև պատմական, քաղաքական, տնտեսական, ռազմական, իսկ ներկա փուլում

նաև էներգաքաղաքական խոր ենթատեքստ, որը պահպանում է երկկողմ հարաբերությունների արդիականությունը տարածաշրջանային քաղաքականության համատեքստում: Վերլուծելով թուրք-վրացական ներկայիս հարաբերությունները՝ հարկ է հստակ պատկերացնել, թե որքանով են երկու ժողովուրդների փոխհարաբերությունների պատմական փորձը և պատմական հիշողությունը ունակ ազդելու երկու երկրների առաջնորդների ու քաղաքական ընտրանու վարքի, քաղաքականության և կողմնորոշման վրա:

Թուրք-վրացական հարաբերությունների պատմաքաղաքական գործընթացը վերհանելու ընթացքում, որտեղ քննվում են թուրք-վրացական քաղաքական շփումների պատմական զարգացման փուլերը, անվիճելի հետաքրքրություն են ներկայացնում այնպիսի մասնագետների աշխատանքները, ինչպիսիք են՝ Կ. Տումանովը, Ա. Խատիսյան, Լ. Շիրիկյան, Ա. Մելքոնյանը, Տ. Ռայսը, Պ. Չոբանյանը, Վ. Մելիքյանը, Մ. Վաչնաձեն, Վ. Գուրուլիին, Մ. Բախտաձեն և այլք<sup>1</sup>:

Հետերկրկետ աշխարհակարգի ժամանակահատվածում Կովկասի տարածաշրջանում աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական, ինչպես նաև թուրք-վրացական հարաբերությունների պատմաքաղաքական գործընթացը հետազոտելիս առանձնահատուկ կարևորություն է տրվել հայտնի աշխարհաքաղաքագետներ, միջազգայնագետներ, քաղաքական վերլուծաբաններ Ի. Սուրայանի, Է. Նուրիևի, Գ. Գաջինի, Գ. Նովիկովայի, Ա. Մելյանի, Մ. Սարգսյանի, Մ. Չելիքչալի, Ջ. Բժեզիսկու և այլոց աշխատություններին<sup>2</sup>:

Թուրք-վրացական հարաբերությունների տնտեսական բաղադրիչի ուսումնասիրության առումով, որտեղ ներկայացված են Թուրքիայի աշխարհատնտեսական էքսպանսիան Վրաստանի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում, առանձնապես արժեքավոր են Ա.

<sup>1</sup> Toumanoff C. Armenia and Georgia. Ch. XIV, The Byzantine Empire, part I, The Cambridge Medieval History, vol. IV, Cambridge, 1966.; Խատիսյան Ա. Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը: Բ տպագր. – Բելրութ., տպ. Համազգային, 1968.; Շիրիկյան Լ. Նոր աշխարհակարգը և Հայաստանը: Եր., ՀՀ ԳԱ Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտ, «ՄԱԲՎԱԲՆ ՀԴՄ», 2010.; Մելքոնյան Ա. Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին: Եր., ՀՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, Ջանգալ-97, 2003.; Райс Т. Сельджуки-кочевники завоеватели Малой Азии. М.: Центрполиграф, 2004.; Չոբանյան Պ. Հայ-Ռուս-Վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին: Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին Հրատ., 2006.; Մելիքյան Վ. Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում: Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917թ. նոյեմբեր – 1918թ. փետրվար): Եր., ՀՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, 2010.; Вачнадзе М., Гурули В., Бахтадзе М. История Грузии (с древнейших времен до наших дней). //Библиотека Гумер-история. //http://www.gumer.info/bibliotek\_Buks/History/Vachn/index.php и др.

<sup>2</sup> Мурадян И. Политика США и проблемы безопасности региона Южного Кавказа. Ер.: «Антарес», 2000.; Нуриев Э. Ни мира, ни войны: геополитическая игра на Кавказе продолжается! //Журнал социально-политических исследований. CA&CC Press, Sweden. //Центральная Азия и Кавказ. 2000. №6(12);; Гаджиев К. Геополитика Кавказа. М.: «Международные отношения». 2003.; G. Novikova., A. Melyan., S. Sargsyan. The South Caucasus: regional security and stability. //Yerevan. Center for Strategic Analysis «SPECRUM». Conference papers. 2004.; Çelikpala M. From a failed state to weak one? Georgia and Turkish-Georgian relations. Turkish Yearbook of International Relations, no. 36, 2005. //[/7\_mithat\_celikpala.pdf]; Бжезинский З. Великая шахматная доска. Господство Америки и его геостратегические императивы. М.: «Международные отношения». 2010 и др.



Կանտեմիրովի, Ա. Եղիազարյանի, Վ. Իվանովի<sup>3</sup> աշխատանքները, որոնցում արծարծվում են թուրք-վրացական առևտրական և ներդրումային հարաբերություններին առնչվող հարցեր, մասնավորապես Թուրքիայի տրանսպորտային ռազմավարության համատեքստում, որը հնարավորություն է տալիս վերջինիս ընդլայնելու իր տնտեսական և քաղաքական ազդեցությունը Վրաստանում՝ դրանով իսկ վերածելով այդ երկիրը իր առևտրահունքային հավելադրյալի:

Եվ Թուրքիայի, և Վրաստանի էներգաքաղաքականության ձևավորման ու զարգացման խնդիրներին տարածաշրջանային քաղաքականության համատեքստում հանգամանակից վերլուծությամբ անդրադարձել են Բ. Մախսայան, Թ. Գոգելիանին, Վ. Պապավան, Ջ. Բարանը, Ս. Սթարրը, Ս. Կորնելլը, Գ. Բաջիկը<sup>4</sup> և այլք քննության առնելով Թուրքիայի և Վրաստանի էներգաքաղաքական ռազմավարության խնդիրները:

Տարածաշրջանային կազմակերպություններում թուրք-վրացական համագործակցության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների վերլուծության են նվիրված Օ. Տանրիսների, Պ. Գարբի, Վ. Կաուֆմանի, Ա. Ինալ-Իպայի, Պ. Ջաքարեիշվիլու, Ս. Մինասյանի<sup>5</sup> և այլոց աշխատանքները:

Վրաստանի էթնիկ փոքրամասնությունների հիմնախնդիրների և դրանց նկատմամբ Թուրքիայի դիրքորոշումը ուսումնասիրվել են Դ. Երեմենի, Ա. Յունուսովի, Դ. Դարչիաշվիլու, Ա. Կոխլովի<sup>6</sup> և այլոց աշխատանքներում:

Թուրքիայի ռազմավարությունն ու մարտավարությունը Վրաստանի ինքնավար պետական կազմավորումների նկատմամբ և տարածաշրջանում թուրքական շահերի առաջ մղելու արդյունավետ միջոցներ մշակելու քայլերը

<sup>3</sup> Кантемиров А. Экономические отношения Турции со странами Закавказья. М., Востоковедный сборник. М., 2001. Вып. 2; Егизарян А. Грузия: структурные проблемы экономики и турецкая экономическая экспансия (1994–2007). Ер., М.: REGNUM, Аналитический центр «Кавказ», 2007.; Иванов В. Некоторые аспекты турецко-грузинского экономического взаимодействия: экономика детерминированная политикой. //Турция: Энергетика и международные экономические отношения. Аналитические записки, выпуск 2. Ер.: «Институт политических исследований» ГНКО 2008.

<sup>4</sup> Маисая В., Гогелиани Т. Фактор энергетических ресурсов Кавказа в преддверии XXI века. //Центральная Азия и Кавказ. 2000. №3(9); Papava V. The Baku–Tbilisi–Ceyhan Pipeline: Implications for Georgia.; Baran Z. The Baku–Tbilisi–Ceyhan Pipeline: Implications for Turkey. //Frederick S. and Cornell S. The Baku–Tbilisi–Ceyhan Pipeline: Oil Window to the West. Central Asia–Caucasus Institute and Silk Road Studies Program–A Joint Transatlantic Research and Policy Center, John Hopkins University-SAIS. Washington, Uppsala University, Sweden, 2005.; Баджик Г. Турция: новый геополитический нарратив. //Центральная Азия и Кавказ. 2006. №3(45)

<sup>5</sup> Танрисев О. Роль Турции в интеграции Черного моря и грузино-абхазский конфликт. //Гарб П., Кауфман В., Инал-Ипа А., Закареишвили П. Аспекты грузино-абхазского конфликта. (13) Перспективы Грузии и Абхазии в контексте черноморской интеграции. Стамбул, 24–27 июня, 2006 г. UCI, University of California, Irvine. 2007. //http://georgien.boell-net.de/downloads/Aspects13.pdf; Минасян С. Вооруженные силы турецкой республики. //Турция: проблемы безопасности и обороны. Ер.: «Институт политических исследований». 2007 и др.

<sup>6</sup> Еремеев Д. Этногенез турок. М.: Изд-во «Наука», Главная редакция Восточной литературы. 1971.; Юнусов А. Ахыскинские(месхетинские) турки: дважды депортированный народ. //Центральная Азия и Кавказ. 1999. №1(2); Дарчиашвили Д. Южная Грузия: вызовы и задачи безопасности. //Центральная Азия и Кавказ. 2000. №1(7); Крылов А. Грузино-абхазский конфликт: роль внешнего фактора. //Центральная Азия и Кавказ. 2001. №4(16) и др.

վերլուծել են Կ. Չատուլիքը, Յու. Անչաբաձեն, Պ. Ջինչարաձեն, Ռ. Գոցիբիձեն, Ա. Կուրտովը, Վ. Զիրիկյան<sup>7</sup> և այլք:

Ատենախոսության մեջ օգտագործվել են պարբերական մամուլի կոլորներ և ինտերնետ աղբյուրներ, որոնցից հիշատակելի են՝ «Հայաստանի Հանրապետություն», «Երկիր», «Ազգ», «Голос Армении», «Правда», «Известия», «Российская газета», «Коммерсантъ», «Независимая газета», «Северный Кавказ», «Википедия», «ИА REGNUM», «The Noyan Tapan Highlights», «Today's Zaman», «Journal of Turkish Weekly», «Hürriyet Gazetesi», «Georgian Times», «Haberler», «Sabah», «Milliyet», «Şafak Yeni», «Media Monitors Network», «Hürriyet DailyNews.com», «Civil Georgian Daily News Online», «Contemporary Review», «Azerbaijan International» և այլն:

Ատենախոսության մեջ օգտագործվել են Թուրքիայի, Վրաստանի, ինչպես նաև ԵՍ, ՌԴ և այլ երկրների կառավարությունների և արտգործնախարարությունների պաշտոնական փաստաթղթեր (էլեկտրոնային տարբերակները), հրամաններ, համաձայնագրեր ու պայմանագրեր, որոնք հրապարակված են եղել պաշտոնական պարբերականներում և տվյալ պետությունների պետական ծառայությունների կայքերում:<sup>8</sup>

Հետազոտությունը իրականացնելիս վերլուծել ենք թուրք-վրացական հարաբերություններին նվիրված մի քանի ատենախոսություն<sup>9</sup>: Հարկ է նշել, որ

<sup>7</sup> Затулин К., Анчабадзе Ю. Грузино-абхазский конфликт: прошлое, настоящее и перспективы урегулирования. Независимая газета. Содружество, № 1(2), январь 1998.//http://www.zatulin.ru/index.php?&section=digest&id=42.; Джинчарадзе П. Некоторые аспекты ситуации в Грузии в контексте возможного вывода российских военных баз из региона.//Центральная Азия и Кавказ. 2000. №5(11); Гоциридзе Р. Экономическая ситуация в блокадной Абхазии. //Центральная Азия и Кавказ. 2002. №6(24); Куртов А. Абхазская автономная республика: остров стабильности Грузии. //Под общ. ред. Кожокина Е. Грузия: Проблемы и перспективы развития. М.: Рос. ин-т стратегич. исслед. 2002. Том II.; Чирикба В. Абхазская диаспора во внутренней и внешней политике Абхазии. (Лейденский университет, Нидерланды). //http://www.abkhaziya.org/server-articles/article-30d66f5bbbc13a17ea6de8256dabea60.html и др.

<sup>8</sup> Конституция Грузии. Статья 2/3. (принята 24 августа 1995 года). //http://www.uznal.org/constitution.php?text=Georgia&language=г.; Закон Грузии «О репатриации лиц, насильственно переселенных бывшим СССР из Грузинской ССР в 40-х годах XX века». № 5261 – РГ. 27 июля 2007. //http://www.memo.ru/hr/discrim/ver1/meshizakon/index.htm.; Bilateral Cooperation with the Neighbour Countries. The Republic of Turkey. MIA Border police of Georgia. //http://www.gbg.ge/index.php?lang=eng&page=133.; Organization of the Black Sea Economic Cooperation(BSEC). General Information About BSEC. Ministry of Foreign Affairs of Georgia. //http://www.mfa.gov.ge/index.php?lang\_id= ENG&sec\_id=525.; Ministry of Foreign Affairs of Georgia. National Security Concept of Georgia. /5.5.3. Strategic Partnership with Turkey. //http://www.mfa.gov.ge/index.php?sec\_id=298&lang\_id=ENG.; Turkey 2008 Progress Report, Brussels, 5.11.2008. SEC(2008)2699. Commission of EU. //http://ec.europa.eu/enlargement/pdf/press\_corner/keydocuments/reports\_nov\_2008/turkey\_progress\_report\_en.pdf.; Turkey's political relations with Georgia. Republic of Turkey Ministry of Foreign Affairs. //http://www.mfa.gov.tr/turkey\_s-political-relations-with-georgia.en.mfa.; TÜRKİYE CUMHURİYETİ ANAYA SASI. DÖRÜNCÜ BÖLÜM Siyasî Haklar ve Ödevler. MADDE 66. I. Türk vatandaşlığı. //http://mevzuat.meb.gov.tr/html/tcanayasasi2.html и др.

<sup>9</sup> Çelebioğlu T. 1990 sonrası Türkiye-Gürcistan ilişkileri. //T.C. Marmara Üniversitesi, Türkiyat Araştırmaları Enstitüsü, Türk Tarihi Anabilim Dalı Cumhuriyet Tarihi Bilim Dalı. Yüksek Lisans Tezi. İstanbul 2005. //archivecaucasus.com/archives/download/11123.; Shantadze B. Gürcistan'ın komşuları ile ilişkileri ve jeopolitik etkinin incelenmesi. //T.C. Uludağ Üniversitesi, Sosyal Bilimler Enstitüsü,



թուրք-վրացական հարաբերությունների արտաքին-քաղաքական երկխոսության զարգացման դինամիկան տարածաշրջանային քաղաքականության մեջ ուսումնասիրված է հատվածաբար: Վրաստանի նկատմամբ թուրքական քաղաքականության համեմատական վերլուծություն տարածաշրջանային քաղաքականության համատեքստում կատարվել է չափազանց քիչ, ինչը թույլ է տալիս մեզ ենթադրել, որ քաղաքագիտության մեջ մինչ օրս չկան տարածաշրջանային քաղաքականության համատեքստում թուրք-վրացական հարաբերությունների զարգացմանը նվիրված համակարգված ուսումնասիրություններ: Հարկ է նշել, որ փաստական հարուստ տվյալների առկայությունը բնավ չի վկայում տվյալ թեմայի մշակվածության մասին, հատկապես եթե նկատի ունենանք ատենախոսության ժամանակագրական սահմանները, ինչը հնարավորություն է տալիս մեզ հանգամանորեն վերլուծելու թուրք-վրացական հարաբերությունների հաստատման ընթացքը տարածաշրջանային քաղաքականության լույսի ներքո՝ մանրամասն ներկայացնելով ընդհանուր առմամբ տարածաշրջանային քաղաքականության վրա ազդող միջազգային գործընթացները:

Հետազոտության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1991-2008 թթ. ժամանակահատվածը, երբ Թուրքիան ճանաչեց Վրաստանի անկախությունը, ապա նրանց միջև հաստատվեցին ռազմավարական հարաբերություններ, և ավարտվում 2008 թվականի օգոստոսին Հարավային Օսիայի դեմ Վրաստանի պատերազմով, ինչը հանգեցրեց աշխարհաքաղաքական իրադրության լիակատար փոփոխությանը տարածաշրջանում, այդ թվում նաև Թուրքիայի ձեռք բերած աշխարհառազմավարական դիրքի կորստին: Քննարկվող ժամանակահատվածում Թուրքիային հաջողվեց Վրաստանի, ինչպես նաև Ադրբեյջանի հետ համագործակցության միջոցով թափանցել Հարավային Կովկասի տարածաշրջան, միաժամանակ իրականացնել միջազգային էներգետիկ նախագծեր, վարել քաղաքականություն ուղղված իր աշխարհաքաղաքական ձգտումների իրականացմանը փորձելով դառնալ տարաշաշրջանի լիդեր:

Այդ գործընթացների ուսումնասիրությունը ներկայացված ժամանակահատվածում արդիական է և պահանջում է առանձնահատուկ մոտեցում և ինքնուրույն հետազոտում: Ընդ որում, ատենախոսության նպատակի ու խնդիրների իրականացումը երբեմն թելադրել է «խախտել» ժամանակային ներքին շեմը, այդ առումով նշված ժամանակահատվածից դուրս կատարվել է

Uluslararası İlişkiler Anabilim Dalı. Yüksek Lisans Tezi. Bursa 2006. //www.archivkavkaz.com/archives/download/11126.; Taşkın M. Bağimsizligindan sonra Gürcistan Türkiye ilişkileri. //T.C. Dokuz Eylül Üniversitesi, Atatürk İlkeleri ve İnkılap Tarihi Enstitüsü. Yüksek Lisans Tezi. İzmir 2006. //http://www.belgeler.com/blg/p9s/bagimsizligindan-sonra-gurcistan-turkiye-iliskileri-turkey-georgia-relations.; Alsirt F.T. Bağimsizlik sonrası Gürcistan'ın yeniden yapılanması ve süreçte Türkiye ile ilişkileri. //T.C. Atılım Üniversitesi, Sosyal Bilimler Enstitüsü, Uluslararası İlişkiler Anabilim Dalı. Yüksek Lisans Tezi. Ankara 2009. //http://www.belgeler.com/blg/1bms/bagimsizlik-sonrasi-gurcistan-in-yeniden-yapilanmasi-ve-bu-surecte-turkiye-ile-iliskileri-reconstruction-of-georgia-in-the-post-independence-period-and-georgian-turkish-relations-in-this-process.

թուրք-վրացական հարաբերությունների ձևավորման և զարգացման պատմաքաղաքական վերլուծություն, ինչը զգալիորեն կօգնի իրատեսորեն գնահատելու Թուրքիայի և Վրաստանի միջև հաստատված երկկողմ հարաբերությունների ժամանակակից մակարդակը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակը թուրք-վրացական հարաբերությունների կառուցվածքային վերլուծությունն ու ընդհանրացումն է տարածաշրջանային քաղաքականության համատեքստում, ինչպես նաև Վրաստանի արտաքին քաղաքական ռազմավարության ձևավորման մեջ Թուրքիայի դերակատարումը ներկայացնելը ինչպես տարածաշրջանային մակարդակով, այնպես էլ միջազգային ասպարեզում՝ դրանով իսկ վեր հանելով Թուրքիայի աշխարհաքաղաքական շահերի աճող ազդեցության աստիճանը ոչ միայն Վրաստանի առնչությամբ, այլև առհասարակ Հարավային Կովկասի տարածաշրջանում: Ելնելով նշված նպատակից՝ աշխատանքում ներկայացված են հետևյալ հիմնական խնդիրները.

- վեր հանել Թուրքիայի և Վրաստանի աշխարհաքաղաքական շահերը հարավկովկասյան տարածաշրջանում պատմաքաղաքական վերլուծության միջոցով, բացահայտել վերջինիս նկատմամբ Թուրքիայի արտաքին քաղաքական ռազմավարությունը հետխորհրդային և թուրք-վրացական ռազմավարական գործընկերության հաստատման հետագա շրջանում, ինչպես նաև ներկայացնել Թուրքիայի արձագանքը 2008 թվականի «օգոստոսյան 5-օրյա պատերազմին»,

- ուսումնասիրել Թուրքիայի և Վրաստանի միջև երկկողմ հարաբերությունները տնտեսական համագործակցության, տարածաշրջանային էներգետիկ քաղաքականության համատեքստում, տրանսպորտային-հաղորդակցական, ռազմական և այլ ոլորտներում, վեր հանել թուրք-վրացական հարաբերություններում առկա հիմնախնդիրը անդրսահմանային ջրային պաշարների օգտագործման ոլորտում,

- ներկայացնել Թուրքիայի և Վրաստանի համագործակցությունը տարածաշրջանային կազմակերպությունների շրջանակներում,

- պարզել, թե ինչ փոխհարաբերություններ ունի Թուրքիան Վրաստանի էթնիկ փոքրամասնությունների և ինքնավար պետական կազմավորումների հետ, դրանց դերը թուրք-վրացական հարաբերությունների հաստատման և ձևավորման գործում՝ տարածաշրջանային քաղաքականության համատեքստում:

Հետազոտության օբյեկտը թուրք-վրացական հարաբերություններն են:

Հետազոտության առարկան Թուրքիայի ազդեցությունն է Վրաստանի արտաքին քաղաքական ուղղվածության և քաղաքական գործընթացի ձևավորման և զարգացման վրա, որը հետազոտվում է տարածաշրջանային քաղաքականության համատեքստում:

Հետազոտության մեթոդական հիմքը: Ատենախոսության թեմայի լիարժեք բացահայտման համար օգտագործվել են պատմագիտական, քաղաքագիտական գրականության մեջ կիրառվող համալիր մոտեցման սկզբունքներն ու մեթոդները: Մասնավորապես, հետազոտության հիմնական սկզբունքներ են դարձել պատմականությունը, օբյեկտիվությունը, համակարգայնությունը,



ուսումնասիրվող փաստերի, գործընթացների, երևույթների քննադատական մեկնարանությունը և այլն:

Վերոնշյալ համընդհանուր մեթոդաբանական սկզբունքները պայմանավորել են հետազոտության հետևյալ մեթոդների կիրառումը՝ ժամանակագրական, հետահայաց վերլուծության, պատմահամեմատական, կոնտենտ-վերլուծության՝ ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ միատեսակ տեղեկատվություն պարունակող գանգվածային աղբյուրների ուսումնասիրության մեթոդը, քաղաքական համեմատական վերլուծության և նկարագրության մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը.

- ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվել ամբողջական, համալիր քննության ենթարկել թուրք-վրացական հարաբերությունների հաստատումն ու զարգացումը տարածաշրջանային քաղաքականության համատեքստում՝ 1991-2008 թթ. ժամանակահատվածում: Առաջին անգամ պատմաքաղաքական սեղմ վերլուծության միջոցով դասակարգվել են Թուրքիայի և Վրաստանի հարաբերությունների ձևավորման և զարգացման փուլերը՝ բացահայտելով երկկողմ հարաբերությունների բնույթը հետխորհրդային շրջանում փաստերի և իրադարձությունների հետագա շարադրմամբ, որոնք ուղղված են թուրք-վրացական ռազմավարական գործընկերության հաստատմանը,

- կատարվել է գործընթացների աշխարհաքաղաքական համակողմանի վերլուծություն կապված 2008 թվականին Վրաստանում «օգոստոսյան 5-օրյա պատերազմի» վերաբերյալ և ներկայացվել Թուրքիայի դիրքորոշումը տվյալ արտաքին քաղաքական ճգնաժամի հաղթահարման հարցում՝ արտահայտված տարածաշրջանային քաղաքականության համատեքստում,

- բացահայտվել են տարածաշրջանի քաղաքական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտային-հաղորդակցական, անդրսահմանային-ջրային, ռազմական և այլ գործոնների դրսևորման առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը թուրք-վրացական հարաբերությունների զարգացման և համագործակցության վրա տարածաշրջանային քաղաքականության շրջանակներում,

- ներկայացվել է Թուրքիայի և Վրաստանի ինտեգրման գործընթացների փոխկապվածության ու փոխկախվածության բնույթը տարածաշրջանային և միջտարածաշրջանային կազմակերպությունների և դաշինքների շրջանակներում և դրանց ազդեցությունը հարավկովկասյան տարածաշրջանի քաղաքականության վրա,

- կատարվել է համալիր վերլուծություն Վրաստանի էթնոտարածքային հիմնախնդիրների և էթնոքաղաքական կոնֆլիկտների կարգավորման վրա Թուրքիայի ազդեցության աստիճանի վերաբերյալ, հատկապես դիտարկվել են Թուրքիայի հարաբերությունները Վրաստանի ազգային և էթնիկ փոքրամասնությունների և ինքնավար պետական կազմավորումների հետ:

Պաշտպանության են ներկայացվել հետևյալ հիմնական դրույթները.

1. Թուրք-վրացական պատմական կապերն ու հարաբերությունները զարգացել են տարբեր ինտենսիվությամբ կապված ժամանակաշրջանի, կոնկրետ իրավիճակների, նպատակների և խնդիրների հետ, որը թելադրված է պատմական իրողությունները հաշվի առնելու անհրաժեշտությամբ: Թուրք-վրացական հարաբերությունների պատմաքաղաքական վերլուծությունը ամփոփում է հիմնախնդիրների բարդ և հակասական մի ամբողջություն, հիմնախնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է հաշվի առնել այդ հարաբերությունների ձևավորման և կայացման մեջ ներգրավված ժողովուրդների և երկրների պատմությունը, որպեսզի հնարավոր լինի անմիջականորեն ազդելու պետությունների միջև տարածաշրջանային մասշտաբով վստահություն ձևավորելու գործընթացի վրա:

2. Հարավկովկասյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական նշանակությունը հետխորհրդային շրջանում, նրա աշխարհառազմավարական դերը գլոբալ և տարածաշրջանային դերակատարների շահերի համակարգում, մասնավորապես, Թուրքիայի Վրաստանի արտաքին-քաղաքական շահերը հաշվի առնելով, իսկ այդ դիտանկյունից նաև առհասարակ տարածաշրջանային քաղաքականության համար: Հետխորհրդային ժամանակաշրջանում Թուրքիայի համար Վրաստանի նկատմամբ վարած քաղաքականության մեջ գլխավոր նպատակ է եղել ներքին կայունության պահպանումը և Աբխազիայում ու Հարավային Օսիայում զինված հակամարտությունների վերսկսումը կանխելը, ինչպես նաև Ռուսաստանի հետ հակամարտության սրման հավանականության նվազեցումը: Ընդ որում, անկայունությունը Վրաստանում կարող է հանգեցնել տարածաշրջանում էներգետիկ և հաղորդակցության ուղիների անկայունությանը, իսկ դրանք շատ կարևոր են Թուրքիայի համար միջազգային քաղաքականություն իրականացնելիս:

3. Վրաստանի աշխարհաքաղաքական նշանակությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ պայմանավորված է նրանով, որ Թուրքիան նախ և առաջ Վրաստանը դիտում է որպես իր աշխարհառազմավարական շահերի գոտի հետխորհրդային տարածքում և կամուրջ դեպի Գասայան ավազանի հարուստ էներգառեսուրսները: Ընդ որում, Թուրքիան ձգտում է Վրաստանին ներառել թուրք-ադրբեջանական տանդեմի մեջ՝ դարձնելով այն յուրատեսակ աշխարհաքաղաքական «եռյակ» Հարավային Կովկասի տարածաշրջանում: Դրան մեծապես օգնեցին տարածաշրջանային էներգետիկ նախագծերը, որոնցում երեք պետությունները վարում են հիմնականում համաձայնեցված էներգետիկ քաղաքականություն՝ դրանով իսկ միավորելով երեք երկրների էներգատարանցման ներուժը: Այս մտտեցումը Թուրքիային հնարավորություն է տալիս յուրատեսակ պրոտեկտորատ ստանձնելու Վրաստանի և Ադրբեջանի նկատմամբ՝ դրանով իսկ ամրապնդելով իր դիրքերը Հարավային Կովկասի տարածաշրջանում:

4. Թուրք-վրացական հարաբերությունները ռազմավարական գործընկերության ձևավորման և զարգացման շրջանում (1991-2008 թթ.) ակնհայտորեն ի ցույց դրեցին այն բարդ իրավիճակը, որը ստեղծվել էր



Հարավային Կովկասում տվյալ ժամանակահատվածում: Վրաստանի շնորհիվ Թուրքիային հաջողվեց մասամբ իրականացնել իր արտաքին-քաղաքական ռազմավարությունը կապված տվյալ տարածաշրջանում իր շահերի առաջնահարցման ու ամրապնդման հետ: Եվ շատ բանով «շնորհիվ» Վրաստանի վերջին ժամանակահատվածում Թուրքիան գրեթե կորցրեց իր արտաքին-քաղաքական շահաբաժինը և դիրքերը տարածաշրջանում: Դրանով իսկ նրան չհաջողվեց նախանշված կարճ ժամանակամիջոցում իրականություն դարձնել տարածաշրջանային գերտերություն դառնալու հնարավորությունը:

5. 2008 թվականի «օգոստոսյան ճգնաժամի» հետ կապված status quo-ն պահպանելու Թուրքիայի ձգտումը Վրաստանում կարևոր աշխարհաքաղաքական լծակները չկորցնելու նպատակ ունեւր: Դրա շնորհիվ Թուրքիային կհաջողվեր ազդել Հարավային Կովկասի տարածաշրջանային քաղաքականության վրա: Թուրքիայի ներկայացրած «Կայունության պակտը» հիմնականում հետապնդում էր քաղաքական ու տնտեսական նպատակներ. թույլ չտալ տարածաշրջանային պատերազմ Կովկասում, ինչը կարող էր ապակայունացնել իրավիճակը հենց Թուրքիայում, ինչպես նաև վերջինիս ներկայացնել միջազգային «խաղաղարարի» դերում և ապահովել երկրի տարանցման գործառույթները կասպյան էներգակիրների փոխադրման գործում, որը չափազանց կարևոր է առաջին հերթին Թուրքիայի, այս նաև Արևմուտքի երկրների համար:

6. Թուրքիայի և Վրաստանի համագործակցության հիմնախնդիրը սնծովյան տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններում ու դաշինքներում (ՄՕՏՀԿ, BLACKSEAFOR և այլն), որոնցում Թուրքիան ձգտում է մեծացնել իր դերը տարածաշրջանային քաղաքականության մեջ, ինչպես նաև ապահովել իր առաջատար դիրքը Սնծովյան տարածաշրջանի պետությունների մեջ: Ընդ որում, չնայած տարածաշրջանային կազմակերպությունների շրջանակներում ծավալված թուրք-վրացական կառուցողական հարաբերություններին, կազմակերպության այլ անդամների միջև առկա հիմնախնդիրների և բարդ հարաբերությունների պատճառով տարածաշրջանային արդյունավետ համագործակցության չհաջողվեց հասնել:

7. Էներգակիրների տարանցման հարցը առանցքային գործոն է Վրաստանի նկատմամբ Թուրքիայի վարած արտաքին քաղաքականության մեջ: Ընդ որում, նշվում է, որ Թուրքիայի աշխարհառազմավարական հետաքրքրությունը Վրաստանի նկատմամբ կրում է երկակի բնույթ, որում տարանցիկ ներուժը ավելի շուտ ոչ թե նպատակ է, այլ նպատակին հասնելու միջոց: Թուրքիայի գլխավոր խնդիրը իր էներգահամակարգը համաեվրոպականին ինտեգրելն է և էներգատարանցման խաչներով դառնալը, ինչը թույլ կտա մենաշնորհյալ կերպով վերահսկել և իրականացնել էներգակիրների տարանցումն ու վերաարտահանումը Եվրոպա, դրանով իսկ մեծացնելով երկրի աշխարհաքաղաքական նշանակությունը միջազգային ասպարեզում:

8. Թուրք-վրացական էներգետիկ համագործակցությունը Թուրքիայի էներգետիկ քաղաքականության իրականացման գլխավոր

առաջնահերթություններից մեկն է, որի միջոցով նաև Վրաստանին է հնարավորություն ընձեռվում հայտնվելու միջազգային ասպարեզում: Այն հատկանշական է նպատակների ընդհանրությամբ և միասնական էներգաքաղաքականություն վարելու շահագրգռվածությամբ, ինչին մեծապես ծառայում է միջազգային էներգանախագծերի իրականացումը, որը էական դերակատարում ունեցավ թուրք-վրացական հարաբերությունների սերտացման գործում տարածաշրջանային քաղաքականության համատեքստում:

9. Թուրքիայի և Վրաստանի միջև ծավալված տնտեսական համագործակցությունը միանգամայն տեսանելի է դարձնում թուրք-վրացական տնտեսական հարաբերությունների «արդյունավետությունը»: Ընդ որում, նշվում է, որ Թուրքիան, մեծացնելով իր արտահանումն ու ներդրումները Վրաստանում, դրանով իսկ ձգտում է այդ երկիրը վերջնականապես դարձնել իր համար լիարժեք «առևտրատնտեսական» հումքային հավելադրուր:

10. Թուրք-վրացական համագործակցությունը մաքսասահմանային ոլորտում բավականին հստակ ցույց է տալիս Վրաստանի դերը, որը փաստորեն չի վերահսկում Թուրքիայի հետ ունեցած իր պետական սահմանները դրանով իսկ նա որոշակիորեն զրկված է իր իսկ տարածքում իր գերակայությունն ապահովելու ինքնիշխան իրավունքից:

11. ԿԱԹԲ երկաթուղային նախագծի իրականացումը Վրաստանի համար կդառնա նա մեկ ապացույց այն բանի, թե ինչպես է միջազգային քաղաքականության տուրյեկուր վերածվում նրա օբյեկտի: Ընդ որում, Վրաստանի համար կեղծ տարանցիկ պետություն դառնալու միանգամայն իրական սպառնալիք է ծագում:

12. Անդրսահմանային ջրային խնդիրը, ավելի ճիշտ անդրսահմանային ջրային ռեսուրսների սահմանաբաժանումը Թուրքիայի և Վրաստանի արտաքին քաղաքականության օրակարգի կարևոր թեմաներից է, որը մինչև օրս չի գտել իր լուծումը:

13. Թուրքիայի և Վրաստանի համագործակցությունը ռազմական ոլորտում, ինչպես նաև ՆԱՏՕ-ի շրջանակներում, Անկարան դիտում է որպես իր դիրքերը Հարավային Կովկասի տարածաշրջանում ամրապնդելու հնարավորություն: Ընդ որում, թուրք-վրացական հարաբերությունները բնութագրվում են որպես ռազմավարական գործընկերություն, ինչը հնարավորություն է տալիս իրատեսորեն գնահատելու երկու երկրների ռազմական համագործակցության վիճակը:

14. Թուրքիան, աջակցելով Վրաստանի մուսուլման էթնիկ փոքրամասնություններին, լուծում է արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրներից մեկը. ամրապնդվել և անցկացնել իր շահերից բխող քաղաքականություն ոչ միայն Վրաստանում, այլև ամբողջ Հարավային Կովկասի տարածաշրջանում, դրանով իսկ ապահովել իր աշխարհաքաղաքական առաջնահերթությունը տարածաշրջանային գերտերության կարգավիճակի հասնելը: Թուրքիան նաև լրջորեն հետաքրքրված է թուրք մեսիտեթիների հայրենադարձմամբ Սամցխե-Ջավախք, ինչը, անկասկած, պետք է դիտարկել



Վրաստանում Թուրքիայի ազդեցության ուժեղացման համատեքստում: Դրանով իսկ վերջինս ձգտում է ուժեղացնել թուրքական տարրը երկրի հարավում, ինչը նրան հնարավորություն կտա միավորվել Քվեմո-Քարթլիի ադրբեջանական փոքրամասնության հետ և անմիջական մուտք ունենալ Ադրբեջան հետագայում ապահովելով մուտքը նաև Կենտրոնական Ասիայի երկրներ:

15. Թուրքիայում կովկասյան հոծ սփյուռքի առկայությունը ստիպել է պաշտոնական Անկարային առանձնակի գոուշությամբ ընդունել դիվանագիտական որոշումներ վրաց-հարավօսական և վրաց-աբխազական հակամարտությունների, ինչպես նաև աջարական ճգնաժամի առնչությամբ՝ դրանով իսկ թույլ չտալով արտաքին-քաղաքական իրողությունների վերածումը երկրում ներքին քաղաքական անկայունության և անհանգստության գործոնի:

Ատենախոսության նորմատիվ հիմքը կազմում են թուրք-վրացական երկկողմ և միջազգային բազմակողմ համաձայնագրերը, արձանագրությունները, խարտիաներն ու պայմանագրերը:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Աշխատանքը հնարավորություն է տալիս նորովի վեր հանել և իմաստավորել տարածաշրջանային գործընթացների էությունը թուրք-վրացական հարաբերությունների համատեքստում, դրանով իսկ աշխարհաքաղաքական իրողությունների հաշվառմամբ պատկերացնել Թուրքիայի, ինչպես նաև Վրաստանի նշանակալի դերը կյանքի կոչվող միջազգային նախագծերում: Աշխատանքը նաև ի ցույց է դնում Թուրքիայի և Վրաստանի աշխարհաքաղաքական ծրագրերն ու ձգտումները միջազգային ասպարեզում, որի շրջանակներում նրանք ձգտում են լուծել իրենց ներքին էթնոքաղաքական և էներգաքաղաքական խնդիրները: Ատենախոսության նյութերը կարող են օգտակար լինեն ոչ միայն Հարավկովկասյան, այլև ամբողջ եվրասիական տարածաշրջանում արտաքին քաղաքական գործընթացների լուսաբանման համար: Հետևաբար դրանք կարող են կիրառվել դասավանդման ժամանակ, հետազոտական աշխատանքներում, որոնք նպատակ ունեն ցույց տալու տարածաշրջանային քաղաքականության մեծացող դերը միջազգային հարաբերություններում: Միաժամանակ հետազոտության դրույթներն ու եզրակացությունները կարող են օգտակար լինել Հարավային Կովկասի տարածաշրջանում քաղաքական գործընթացներում ներգրավված հիմնական միջազգային դերակատարների կողմից Թուրքիայի և Վրաստանի առնչությամբ քաղաքական գործունեության արդյունավետությունը մեծացնելու ուղղությամբ տարածաշրջանային քաղաքականության վերլուծությունների և հանձնարարականների մշակման համար:

Բացի այդ, հետազոտության նյութերը կարող են օգտագործվել ուսումնական գործընթացում՝ Հարավկովկասյան տարածաշրջանի, քաղաքագիտության, էթնոքաղաքականության, կոնֆլիկտաբանության, տարածաշրջանագիտության գծով մասնագետներ պատրաստելիս և տարածաշրջանային խնդիրների վերաբերյալ հատուկ դասընթացներում:

Աշխատանքի փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնում, որտեղ և ներկայացվել ու դիտարկվել են ատենախոսության հիմնական տեսական դրույթներն ու եզրահանգումները: Ուսումնասիրության մեջ ներառված խնդիրների վերաբերյալ զեկուցումներ են կարդացվել Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի ուսանողների, ասպիրանտների և դասախոսների գիտապրակտիկ տարեկան գիտաժողովների ժամանակ (Երևան, 2009, 2010, 2011թթ.): Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետազոտության թեմայով հրատարակված գիտական հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսության կառուցվածքն արտացոլում է ուսումնասիրության հիմնական նպատակն ու առարկան: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ կազմված տասներկու ենթագլուխներից, եզրակացություններից և 214 անուն գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 189 էջ է: Այն գրված է ռուսերեն:

## II. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է ընտրված թեմայի արդիականությունը, բնութագրվում է դրա գիտական մշակվածության աստիճանը, սահմանվում են օբյեկտն ու առարկան, ձևակերպվում են հետազոտության նպատակներն ու խնդիրները, նշվում են աշխատանքի ժամանակագրական շրջանակները, ներկայացվում է մեթոդաբանական հիմքը, փաստարկվում է աշխատանքի գիտական նորույթը, առանձնացվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, բնութագրվում է ատենախոսության նորմատիվ և գործնական նշանակությունը, հաղորդվում են տեղեկություններ ատենախոսական աշխատանքի փորձաքննության արդյունքների վերաբերյալ և համառոտ ներկայացվում է նրա կառուցվածքը:

Առաջին գլխում «Վրաստանի դերն ու տեղը Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ», համառոտ ներկայացվում են թուրք-վրացական հարաբերությունների պատմաքաղաքական գործընթացի կառուցվածքն ու առանձնահատկությունները: Բացահայտվում են թուրք-վրացական քաղաքական երկխոսության ձևավորման ակունքները և զարգացման փուլերը, որոնք մշտապես ուղեկցվել են երրորդ կողմի հետ շահերի առձակատմամբ, որտեղ Վրաստանի դերը հիմնականում երկրորդական էր:

Քննարկվում է Հարավային Կովկասի տարածաշրջանի մեծացող աշխարհաքաղաքական նշանակությունը, վերլուծվում է թուրք-վրացական հարաբերությունների ձևավորման և զարգացման գործընթացը հետխորհրդային շրջանում:

Նշվում է, որ հայ-ադրբեջանական հակամարտության առկայությունը, հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը, ինչպես



նան Իրանի հետ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի բարդ հարաբերությունները օգնեցին Վրաստանին չնայած ներքին չլուծված հակամարտություններին, դառնալ կարևոր օղակ աշխարհառազմավարական շղթայում, որը կապում է Թուրքիային, նրա հետ մեկտեղ նաև Արևմուտքի երկրներին Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի հետ:

Վրաստանի առկայությամբ Թուրքիան հետխորհրդային շրջանում փորձում էր իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը կօգներ խուսափելու այդ երկրում ներքին անկայունությունից և Աբխազիայում ու Հարավային Օսիայում ռազմական հակամարտության վերսկսումից, ինչպես նաև նվազագույնի հասցնելու Ռուսաստանի հետ հակամարտության սրման հնարավորությունը:

Հետագոյնում են Վրաստանի նկատմամբ Թուրքիայի ունեցած հետաքրքրությունների պատճառները: Վերլուծվում են Թուրքիայի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի ազդեցության մեթոդներն ու ռեսուրսները Վրաստանի արտաքին քաղաքական գործընթացների վրա: Գնահատական է տրվում վերոնշյալ դերակատարների ազդեցության արդյունավետությանը քաղաքական գործընթացի վրա տարածաշրջանում:

Նշվում է, որ Թուրքիայի և արևմտյան երկրների կողմից Վրաստանին անվերապահորեն «ճանաչելու» անվիճելի գործոն է նրա՝ տարածաշրջանային էներգետիկ նախագծերում ներգրավվածությունը, ինչը գրեթե էներգետիկ քաղաքականության ակնհայտ արդյունքն է: Վրաստանը նաև կարողացավ օգտվել աշխարհաքաղաքական գործոնից՝ միջազգային-իրավական մակարդակով ձեռքբազատվելու երկրում Ռուսաստանի քաղաքական գերակշռումից, որին մեծ մասամբ օգնեց Եվրոպայում սովորական սպառազինությունների պայմանագիրը:

Ընդհանուր առմամբ, արձանագրվում է, որ Թուրքիան Վրաստանը դիտում է որպես իր աշխարհաքաղաքական հետաքրքրությունների գոտի հետխորհրդային տարածքում և որպես կամուրջ էներգառեսուրսներով հարուստ կասպիական ավազանի հետ: Այս առումով Թուրքիան ձգտում է Վրաստանին ներգրավել թուրք-ադրբեջանական տանդեմի մեջ՝ դարձնելով այն յուրատեսակ աշխարհաքաղաքական «եռյակ» Հարավային Կովկասի տարածաշրջանում, դրանով իսկ Թուրքիան ցանկանում է հանդես գալ որպես տարածաշրջանային տերություն:

Քննության է առնվում Թուրքիայի դիրքորոշումը ռուս-վրացական «5-օրյա պատերազմի» կամ «օգոստոսյան ճգնաժամի» նկատմամբ, որը փոփոխեց տարածաշրջանի ամբողջ աշխարհաքաղաքական պատկերը:

Նշվում է, որ Թուրքիայի դիրքորոշումը նշյալ իրադարձությունների նկատմամբ ավելի քան յուրատեսակ էր: Մի կողմից Վրաստանի հետ հաստատված ռազմավարական հարաբերությունները, մյուս կողմից՝ Ռուսաստանի հետ մեծացող տնտեսական գործընկերությունը չէին կարող չազդել այդ դիրքորոշման վրա:

Կարծիք է հայտնվում, որ «օգոստոսյան ճգնաժամը» Թուրքիայի համար դարձավ ոչ այնքան տնտեսական, որքան իր տեղի աշխարհաքաղաքական կորուստ տարածաշրջանային տերությունների աստիճանակարգում:

Թուրքիայի վարչապետի ակտիվությունը բնավ չէր նշանակում թուրքական ազակցություն Ռուսաստանին, այլ հուսահատ փորձ էր շտկելու Թուրքիայի խաթարված դիրքը և միջոց գտնել պաշտպանելու երկրի ազգային շահերը աշխարհաքաղաքական նոր իրավիճակում: Անկարան այդ վիճակից դուրս գալու միակ միջոցը համարում էր տարածաշրջանում անվտանգության և համագործակցության համընդգրկուն համակարգ ստեղծելը, յուրատեսակ «Կովկասի պակտը», որի մասնակիցները, տարածաշրջանի երկրներից բացի, պետք է դառնային նաև Թուրքիան, Ռուսաստանը, գուցե և ԱՄՆ-ը:

Նշվում է, որ «Կովկասի անվտանգության և համագործակցության պակտի» (ԿԱՀՊ) գաղափարը Թուրքիայի կողմից փորձ էր ներկայանալու որպես անկողմնակալ միջնորդ տարածաշրջանային հակամարտությունների լուծման հարցում: Դրանով իսկ Թուրքիան ձգտում էր հնարավորություն գտնել «օգոստոսյան ճգնաժամի» ընթացքում ճանաչվելու որպես «չեզոք» կողմ, որը շահագրգիռ է տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատման հարցում:

Կարծիք է հայտնվում, որ Թուրքիայի առաջարկած ԿԱՀՊ-ն «փրկարար պլատֆորմ» էր հենց Թուրքիայի համար, որը փորձում էր հնարավորինս անվտանգ դարձնել երկիրը, թեև այդ պլատֆորմն առաջարկել էր կովկասյան տարածաշրջանի բոլոր երկրների համար թուրքական դիվանագիտության ոգով: Դրանով իսկ Թուրքիայի արձագանքը «օգոստոսյան ճգնաժամին» Վրաստանում հիմնականում քաղաքական և տնտեսական շահեր էր հետապնդում. թույլ չտալ տարածաշրջանային պատերազմ Կովկասում, որը կարող էր ապակայունացնել իրավիճակը նաև Թուրքիայում, ինչպես նաև կարևորել Թուրքիայի դերակատարումը որպես միջազգային «խաղաղարար» վտանգագերծելով երկրի տարանցիկ գործառույթը՝ կասպիական էներգակիրների փոխադրումները դեպի Եվրոպա, որը չափազանց կարևոր է ինչպես Թուրքիայի, այնպես էլ Արևմուտքի համար:

Երկրորդ գլուխը վերնագրված է «Թուրքիայի և Վրաստանի բազմակետոր համագործակցությունը», որտեղ ուսումնասիրվում են թուրք-վրացական համագործակցության ձևերն ու հիմնական ուղղությունները:

Ընդհանուր գծերով ներկայացվում է տնտեսական իրադրությունը տարածաշրջանում, բացահայտվում են Թուրքիայի ձգտումները ստանձնելու առաջնորդի դերը միջտարածաշրջանային տնտեսական կապերի հաստատման գործում, ընդ որում, շեշտվում է, որ Վրաստանը ևս առանցքային դեր ունի Թուրքիայի արտաքին տնտեսական քաղաքականության իրականացման հարցում ոչ միայն Հարավային Կովկասում, այլև Կենտրոնական Ասիայում:

Նշվում են այն հիմնական ներդրումային ոլորտները, որտեղ Թուրքիան նախընտրում է արագ վերադարձելություն ապահովող ներդրումներ անել. դրանք են՝ ենթակառուցվածքային նախագծերը, օրինակ՝ օդանավակայանների



արդիականացումն ու շահագործումը, էներգետիկ, պետական և արտադրական, ինչպես նաև ռազմական օբյեկտների, ավտոմայրուղիների, երկաթուղու շինարարությունը, հեռահաղորդակցության ուղիների անցկացումը և այլն: Ընդ որում, Թուրքիան այդ աշխատանքներում ընդգրկում է իր մասնագետներին ու աշխատողներին յուրօրինակ էքսպանսիա ծավալելով Վրաստանի աշխատուժի շուկայում:

Հեղինակը մատնանշում է Թուրքիայի քողարկված մտադրությունը՝ ներգրավված լինելու Վրաստանի տնտեսության այն ոլորտներում, որոնց նկատմամբ վերահսկողություն սահմանելով, կարող է վերահսկել երկրի համար կենսական նշանակություն ունեցող ոլորտները, քայլ առ քայլ յուրացնելով Վրաստանի պետականակազմիչ ենթակառուցվածքները՝ դարձնելով դրանք յուրատեսակ հումքային ներարկում իր տնտեսության համար: Հեղինակը կարծում է, որ առևտրատնտեսական շահերով հանդերձ, Թուրքիան իր ներդրումներով առաջին հերթին հետապնդում է աշխարհառազմավարական նպատակներ: Այս մասին է վկայում այն, որ Թուրքիան ձգտում է իր ներդրումային քաղաքականությունն իրականացնել առաջին հերթին Վրաստանի մուսուլմանաբնակ շրջաններում, ինչը հետագայում թույլ կտա Թուրքիային առաջ մղելու իր շահերը ոչ միայն Վրաստանում, այլև ամբողջ հարավկովկասյան տարածաշրջանում:

Ներկայացվում են առանձին Թուրքիայի և Վրաստանի էներգետիկ քաղաքականությունը տարածաշրջանային քաղաքականության համատեքստում, վերլուծվում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում միջազգային էներգանախագծերի մշակման և զարգացման դինամիկան, որտեղ երկու երկրները իրականացնում են գրեթե համաձայնեցված քաղաքականություն:

Ի ցույց են դրվում Թուրքիայի էներգետիկ ռազմավարության հիմնական նպատակները, որոնցից մեկը համաեվրոպական էներգետիկ շուկային ներգրավվելն է՝ դրանով իսկ դառնալով էներգաձևավորիչ օղակ Եվրոպայի ընդհանուր էներգետիկ քաղաքականության շղթայում: Նշվում է, որ թուրք-վրացական էներգետիկ համագործակցությունը Թուրքիայի էներգետիկ քաղաքականության ձևավորման առաջնահերթություններից է, որտեղ առաջին հերթին կարևորվում է մասնակցությունը տարածաշրջանային էներգետիկ նախագծերում: Թուրքիայի և Վրաստանի նպատակը էներգակիրների աղբյուրների դիվերսիֆիկացմամբ իրենց էներգետիկ անկախությունը Ռուսաստանից պաշտպանելն է: Բացի այդ, երկու երկրներն էլ շահագրգռված են տարանցումից գոյացող շահույթով: Թուրքիան ձգտում է միջնորդ դառնալ Եվրոպայի ու Ասիայի միջև էներգակիրների վաճառքի հարցում՝ դրանով իսկ մեծացնելով իր դերը միջազգային քաղաքականության մեջ և դառնալով էներգետիկ հանգույց ամբողջ եվրասիական տարածաշրջանում:

Վերհանվում են այն պատճառները, որոնցով պայմանավորված է Թուրքիայի հետաքրքրվածությունը և Վրաստանի դիրքորոշումը Գարս-Ախալքալակ-Թբիլիսի-Բաքու երկաթուղային նախագծի իրականացման հարցում

տարածաշրջանային քաղաքականության շրջանակներում: Մատնանշվում են այն նպատակները, որոնցով առաջնորդվում է Թուրքիան, նրա հետ մեկտեղ Ադրբեջանը՝ գործելով վրացական ուղղությամբ: Նախ, այս նախագծի իրականացումը Թուրքիային խոստանում է ֆինանսական շահ տրանսպորտային-տարանցիկ գործառույթի շնորհիվ, բացի այդ, երկիրը հնարավորություն կունենա դառնալու աշխարհառազմավարական օղակ ամբողջ եվրասիական տարածքում՝ միացնելով Եվրոպան Ասիային:

Աշխարհաքաղաքական այս լծակը ձեռք բերելով Թուրքիան մտադիր է ոչ միայն իրականացնել իր արտաքին քաղաքականությունը տարածաշրջանում, այլև դառնալ գլոբալ քաղաքականության անփոխարինելի բաղադրիչ: Նշվում է, որ ֆինանսական դժվարությունների պատճառով այս նախագիծը դեռևս չի հաջողվում կյանքի կոչել: Ընդ որում, Վրաստանում բավականին թերահավատ են այս նախագծի իրականացման հարցում, մանավանդ որ այսօր չկան նախագծի տնտեսական գրավչությունը հիմնավորող վերջնական հաշվարկներ: Եթե պաշտոնական Թբիլիսին խոսում է այդ նախագծի ռազմավարական նշանակության մասին, քանի որ այն հնարավորություն կտա Թուրքիայի տարածքով մուտք գործել Եվրոպա, ապա վրացի անկախ փորձագետները իրական սպառնալիք են տեսնում Վրաստանը վերածելու կեղծ տարանցիկ պետության, քանի որ բեռնափոխադրումների մի մասի ուղղորդումը թուրքական նավակայաններ կարող են զգալիորեն նվազեցնել Բաթումիի և Փոթիի նավահանգիստների եկամուտները: Նշվում է, որ վրացական կողմի «կասկածները» ցրելու համար Ադրբեջանը հատկացրել է 775 մլն ԱՄՆ դոլար երկարաժամկետ վարկ, այդուհանդերձ երկաթուղու շինարարության ավարտը նախատեսված 2011 թ. փոխարեն տեղափոխվել է 2012 թ.:

Ներկայացվում է թուրք-վրացական համագործակցությունը սահմանային-մաքսային ոլորտում, վերհանվում են երկու երկրների միջև առկա խնդիրները տրանսսահմանային ջրային պաշարների օգտագործման բնագավառում: Դիտարկելով թուրք-վրացական մաքսային-սահմանային համագործակցության ընթացքը՝ նշվում է, որ Վրաստանի մաքսային ոստիկանությունը ինտենսիվորեն համագործակցում է Թուրքիայի Զինված ուժերի գլխավոր շտաբի հետ, որը մշակում է երկու երկրների միջև մաքսային-սահմանային ոլորտում համագործակցության ամենամյա ծրագիրը: Դրանով իսկ, ըստ հեղինակի, Վրաստանը փաստացի թուրքական ռազմական գերատեսչությանն է հանձնել իր պետական սահմանային վերահսկողության գործառույթը: Հատկանշական է, որ կառավարչական գործառույթից բացի, Թուրքիան ստանձնել է նաև Վրաստանի սահմանապահ ուժերի և մաքսային ոստիկանության համար կադրերի պատրաստման գործը, իսկ Թուրքիայի ԶՈՒ գլխավոր շտաբը անմիջականորեն ինքն է նշանակում Վրաստանի մաքսային ոստիկանության կապի սպաներին և աշխատակիցներին: Հեղինակի կարծիքով թուրք-վրացական համագործակցության այսօրինակ «ինտենսիվությունը» մաքսային-սահմանային ոլորտում վկայում է, որ Վրաստանը փաստացի չի վերահսկում Թուրքիայի հետ իր պետական սահմանը:



Նշվում է, Թուրքիայի և Վրաստանի արտաքին քաղաքականության օրակարգում առկա կարևոր հարցերից մեկը տրանսսահմանային ջրային պաշարների օգտագործման խնդիրն է: Այս առումով թուրք-վրացական հարաբերություններում առկա հիմնական խնդիրը ճորտիս գետի վրա թուրքական ամբարտակների կառուցումն է, ինչը ունի կարևոր տնտեսական և էներգետիկ նշանակություն Թուրքիայի համար, սակայն կարող է լուրջ բնապահպանական աղետի վերածվել Վրաստանի, մասնավորապես Աջարիայի սևծովյան ափի համար, ուր թափվում է ճորտիս գետը:

1997 թ. սկսած՝ այս խնդիրը քննարկվել է երկու երկրների բարձրաստիճան ներկայացուցիչների քաղաքական հանդիպումների ժամանակ, սակայն հուշագրերից և ընդհանուր հայտարարություններից այն կողմ հարցի լուծումն ընթացք չի ստացել:

Նշվում է, որ պաշտոնական Թբիլիսին ձգտում է խնդրի կարգավորման համար որպես միջնորդ բանակցություններում ներգրավել երրորդ կողմի՝ հատկապես ԱՄՆ-ին ու ԵՄ-ին՝ Թուրքիայի վրա ավելի արդյունավետ ազդեցության համար: Այդպիսով, վերոհիշյալ գործընթացը տեղի է ունենում տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխությունների համատեքստում, որտեղ մեծացել է Թուրքիայի դերը, որը ձգտում է էներգետիկ անկախության և սեփական արտաքին քաղաքականության իրականացմանը տարածաշրջանում, ինչը չի մտնում ԱՄՆ-ի և ԵՄ-ի ծրագրերի մեջ: Հետևաբար թուրք-վրացական համագործակցությունը տրանսսահմանային ջրային պաշարների օգտագործման ոլորտում ոչ այնքան բնապահպանական, որքան աշխարհաքաղաքական խնդիր է:

Անդրադարձ է կատարվում թուրք-վրացական ռազմական համագործակցության սկզբնավորմանը, վերլուծվում են ռազմավարական գործընկերության հաստատմանը հանգեցրած գործընթացները, վեր են հանվում Վրաստանի հանդեպ Թուրքիայի ռազմավարական նպատակը տարածաշրջանային քաղաքականության համատեքստում: Ներկայացվում է ռազմական ոլորտում երկու երկրների միջև կնքված պայմանագրերի, համաձայնագրերի և արձանագրությունների բնույթը:

Ըստ հեղինակի՝ Թուրքիայի կարևորագույն նպատակներից մեկը վերակազմավորվող վրացական բանակին աջակցելն էր Ռուսաստանին դիմագրավելու հարցում՝ դրանով իսկ փորձելով թուլացնել ռուսական ազդեցությունը տարածաշրջանում:

Նշվում է, որ 2008 թ. «օգոստոսյան ճգնաժամը» բացահայտորեն ի ցույց դրեց թուրք-վրացական ռազմական համագործակցության էությունը, որտեղ Վրաստանի դերը այնքան աննշան է, որ խոսել լիարժեք ռազմավարական գործընկերության մասին երկրների միջև տեղին չէ: Հետևաբար, թուրք-վրացական ռազմական համագործակցությունը, չնայած իրավապայմանագրային բազային, ամուր հիմքեր չունի, որի հիմնական պատճառը վրացական պետության թույլ և ոչ ինքնուրույն լինելն է:

Վեր են հանվում տարածաշրջանում առաջնորդ դառնալու Թուրքիայի հավակնությունները, որին հասնելու համար ստեղծվեցին սևծովյան կազմակերպություններ, որոնցում Թուրքիան նպատակ ունի վերահսկել տարածաշրջանային պետություններին՝ միաժամանակ ի ցույց դնելով իր կարևորությունը միջազգային ասպարեզում՝ որպես տարածաշրջանային անկախ դերակատար: Այսպես, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունում (ՄՕՏՀԿ) Թուրքիան և Վրաստանը մեծ կարևորություն են տալիս տրանսպորտի, էներգետիկայի, առևտրի, գյուղատնտեսության, զբոսաշրջության ոլորտներում համագործակցությանը, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի, գիտության և տեխնոլոգիաների զարգացմանը, կազմակերպված հանցավորության դեմ պայքարին և այլն: Ընդ որում, Վրաստանը փորձում է ՄՕՏՀԿ շրջանակներում ապահովել իրեն միջազգային անվտանգության յուրատեսակ ծածկով, որը կդառնա երկրի ամբողջականության ճանաչման երաշխիք:

Հեղինակը տարբեր փաստերի և աղբյուրների վերլուծության հիման վրա եզրակացնում է, որ այս կազմակերպության հետագա արդյունավետ զարգացումը կաակաճի տակ է, քանի որ դրա հիմնադիր պետություն Թուրքիան չի կատարում ԵԱՀԿ շրջանակներում ստանձնած պարտավորությունները՝ սահմանափակելով իր հարևանների ՄՕՏՀԿ անդամ Հայաստանի և ԵՄ անդամ Կիպրոսի տնտեսական զարգացումը, բացի այդ, առկա են բազմաթիվ տարաձայնություններ ՄՕՏՀԿ անդամ պետությունների, մասնավորապես Վրաստանի և Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև:

Թուրք-վրացական համագործակցության մյուս ձևաչափը Սևծովյան օպերատիվ փոխգործակցության ռազմածովային խումբն է (BLACKSEAFOR), որը նույնպես ստեղծվել է Թուրքիայի նախաձեռնությամբ: Այստեղ Թուրքիան անվտանգության երաշխիքի և յուրատեսակ հակակշռի դեր է խաղում Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի հնարավոր ագրեսիայի դեմ:

Երրորդ գլուխը վերնագրված է «Թուրքիայի փոխհարաբերությունները Վրաստանի էթնիկ փոքրամասնությունների և ինքնավար պետական կազմավորումների հետ»: Այստեղ հետազոտվում և վերլուծվում է էթնոքաղաքական կոնֆլիկտների դինամիկան Վրաստանում, վեր են հանվում Թուրքիայի նպատակներն ու դիրքորոշումը դրանք կարգավորելու հարցում, ներկայացվում է Թուրքիայի քաղաքականությունը ազգային և էթնիկ փոքրամասնությունների, ինչպես նաև Վրաստանի ինքնավար պետական կազմավորումների նկատմամբ տարածաշրջանային քաղաքականության համատեքստում:

Սեղմ էթնոքաղաքական վերլուծության է ենթարկվում ԽՍՀՄ փլուզումից հետո Վրաստանում ստեղծված իրադրությունը: Նշվում է, որ Վրաստանը միակ պետությունն է, որը Սահմանադրություն է ընդունել, որում լուծված չէ երկրի տարածքային կառուցվածքի իրավագործությունը, ավելին, այն պետք է ամրագրվի Վրաստանի ամբողջ տարածքում իրավագործության հնարավոր վերականգնումից



հետո: Այդպիսի մոտեցումը Վրաստանի կողմից իր կազմում գոյություն ունեցող որոշ տարածքների ոչ միայն դե ֆակտո, այլև դե յուրե ճանաչում է կշանակում:

Եզվում է, որ թուրք-վրացական հարաբերություններում առկա ամենաարդիական խնդիրներից է թուրք մեսխեթցիների հայրենադարձման հարցը, որոնք 1944 թ. արտաքսվել էին Թուրքիային սահմանակից վրացական Սամցխե-Ջավախք շրջանից: Դիտարկում է արվում, որ թուրք մեսխեթցիների հարցում քայլեր կատարելու իմիտացիան Վրաստանին հնարավորություն է տվել զգալի ֆինանսական միջոցներ և քաղաքական աջակցություն ստանալու Արևմուտքի երկրների և միջազգային կազմակերպությունների կողմից: Թուրքիայի իշխանությունները ևս պատրաստակամություն հայտնեցին Վրաստանին տնտեսական օժանդակություն հատկացնելու և մի շարք տարածաշրջանային նախագծեր իրականացնելու թուրք մեսխեթցիների կազմակերպված վերադարձն սկսելուն պես: Թուրքական իշխանությունները ձգտում են օժանդակել թուրք մեսխեթցիների վերադարձին Վրաստան դրանով իսկ իրագործելով իրենց հեռահար նպատակը վրացական արեալում թուրքական տարրի ընդլայնումը, որն անկասկած կդառնա թուրքական շահերի առաջխաղացման գործոն ամբողջ հարավկովկասյան տարածաշրջանում:

Ասվածը վկայում է, որ Թուրքիայի քաղաքականությունը Վրաստանի էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ ունի լուրջ և հեռահար նպատակներ, որոնցում վերջիններիս դերը որոշիչ կլինի առհասարակ թուրք-վրացական հարաբերությունների զարգացման համատեքստում:

Ուսումնասիրվում է Վրաստանի ինքնավար պետական կազմավորումների հետ Թուրքիայի հարաբերությունների հաստատման ու զարգացման խնդիրը: Ներկայացվում է թուրք-աբխազական, թուրք-հարավօսական և թուրք-աջարական, երկկողմ հարաբերությունների հաստատման ընթացքն ու զարգացման դինամիկան: Ձգտելով չփչացնել Թբիլիսիի հետ հարաբերությունները՝ Անկարան մշտապես հայտարարում է Վրաստանի տարածքային ամբողջականության ճանաչման մասին, սակայն կովկասցիների սովարաթիվ սփյուռքի առկայությունը Թուրքիայում (մոտ 7 մլն), որից տարբեր հաշվումներով 200-700 հազարը աբխազներ են, և 20 հազարից 100 հազար օսեր, ստիպում է իշխանություններին մեծ զգուշավորություն ցուցաբերել վրաց-աբխազական և վրաց-հարավօսական հակամարտությունների վերաբերյալ դիվանագիտական դիրքորոշումներում՝ դրանով իսկ կանխելով արտաքին քաղաքական իրողությունների վերաճումը ներքաղաքական անկայունության ու անհանգստությունների երկրի ներսում:

Թուրք-աջարական հարաբերությունները պատկառելի տեղ ունեն Հարավային Կովկասում Թուրքիայի ռազմավարական ծրագրերի մեջ:

Ներկայացվում է Թուրքիայի դիրքորոշումը 2004 թ. ծագած կոնֆլիկտի նկատմամբ, երբ իշխանությունից հեռացվեց Աջարիայի ղեկավար Ա. Աբաշիձեն: Այդ առումով Թուրքիան ստիպված եղավ համադրել իր վերաբերմունքը Աջարիայում ստեղծված իրավիճակի նկատմամբ ԱՄՆ-ի և Ռուսաստանի դիրքորոշումների հետ, ինչը դրսևորվեց Վրաստանի այդ «ներքաղաքական»

ճգնաժամին «չմիջամտելու» քաղաքականությամբ: Դրանով իսկ հեղինակը եզրակացնում է, որ ինքնավար հանրապետությունում այդ իրադարձությունները աշխարհաքաղաքական ենթատեքստ ունեն, որտեղ ԱՄՆ-ին հաջողվեց ինչ-որ չափով սահմանափակել Ռուսաստանի և Թուրքիայի դիրքերը Հարավային Կովկասում, մասնավորապես Վրաստանում, և որ թուրք-աջարական հարաբերությունները հետագայում չեն դիտարկվի թուրք-վրացական հարաբերություններից անջատ, ինչը, անկասկած, կարելի է դիտարկել որպես «վրացական» դիվանագիտության հաղթանակ:

Ատենախոսական աշխատանքի հիմնական արդյունքներն ամփոփվել են հետևյալ եզրակացություններում.

1. Թուրք-վրացական հարաբերությունները զարգացել են տարբեր ինտենսիվությամբ՝ պայմանավորված տվյալ ժամանակահատվածով, ստեղծված իրավիճակով, նպատակներով, խնդիրներով: Թուրք-վրացական հարաբերությունների պատմաքաղաքական վերլուծությունը ի հայտ է բերում մի շարք խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է հաշվի առնել տարածաշրջանի երկրների ու ժողովուրդների պատմությունը, որոնք անմիջականորեն առնչվում են այդ հարաբերությունների ձևավորմանը:

2. Էթնիկ բազմազանությունը, տնտեսական անհամաչափ զարգացումը, տարածաշրջանի ժողովուրդների միջև հարաբերությունների բարդ և հակասական պատմությունը պայմանավորել են կոնֆլիկտայնության և անկայունության բարձր մակարդակը Հարավային Կովկասում: Էթնոքաղաքական կոնֆլիկտների լուծված չլինելու հանգամանքով է պայմանավորված տարածաշրջանային և գլոբալ դերակատարների միջամտությունը տարածաշրջանում: Սրանով Թուրքիան հնարավորություն ստացավ ազդելու տարածաշրջանային քաղաքականության վրա՝ փորձելով դառնալ տարածաշրջանային առաջնորդ: Թուրքիայի միակ առաջնահերթությունը Ռուսաստանի առաջնորդության վերականգնումը տարածաշրջանում թույլ չտալն էր, ուստի ձգտում էր իրականացնել Ռուսաստանի ազդեցությանը գերազանցող այլընտրանքային քաղաքականություն: Վրաստանը սատարեց Թուրքիայի այդ քաղաքականությունը՝ ձգտելով նվազեցնել իր կախվածությունը Ռուսաստանից՝ դրանով իսկ հակակշիռ ստեղծելով ռուսական քաղաքականությանը:

3. Հարավային Կովկասի տարածաշրջանում ստեղծված բարդ էթնոքաղաքական իրադրությունը, որը ծագել է դարաբաղյան հակամարտության հետևանքով, ներքաղաքական հայաստանի և Ադրբեջանի անմիջական ռազմական գործողությունների մեջ, որը հնարավորություն տվեց Վրաստանին՝ չնայած սեփական չլուծված էթնոքաղաքական կոնֆլիկտներին, դառնալ առանցքային պետություն տարածաշրջանում: Վրաստանը, որն ունի բազմաթիվ ներքին չլուծված կոնֆլիկտներ և թաքնված սպառնալիքներ, որոնք կարող են վտանգել այդ պետության անգամ գոյությունը, կարողացավ մշակել արտաքին քաղաքական առաջնահերթություն, ինչի շնորհիվ դարձավ կապող օղակ, որն անբաժեշտ է գլոբալ էներգետիկ քաղաքականություն իրականացնելու համար:



4. Թուրքիայի արձագանքը Վրաստանում 2008 թ. «օգոստոսյան 5-օրյա պատերազմին» և այդ կապակցությամբ առաջադրված «կայունության պակտը» հիմնականում հետապնդում էին քաղաքական և տնտեսական նպատակներ. թույլ չտալ տարածաշրջանային պատերազմ Կովկասում, որը կարող էր ապակայունացնել իրավիճակը հենց Թուրքիայում, ինչպես նաև հանդես գալ որպես «միջազգային խաղաղարար» և վտանգագերծել կասպիական էներգակիրների տարանցիկ փոխադրման երկրի գործառույթը, որոնք շատ կարևոր են առաջին հերթին Թուրքիայի, ապա և Արևմուտքի երկրների համար:

5. Տարածաշրջանային տերության կարգավիճակ ձեռք բերելու նպատակով Թուրքիան նախաձեռնեց սևծովյան տարածաշրջանային կազմակերպությունների ստեղծումը՝ ՄՕՏՀԿ-ի և Սևծովյան օպերատիվ փոխգործակցության ռազմածովային խմբի (BLACKSEAFOR), որոնց անդամակցում է նաև Վրաստանը: ՄՕՏՀԿ-ն բավականին հակասական միջազգային նախագիծ է, քանի որ այնտեղ փորձ է արվում տնտեսական համագործակցության ոլորտներ ձևավորել և քաղաքակրթական, և դավանաբանական տարբերություններ ունեցող երկրների միջև: Դա զգալիորեն խոչընդոտում է այդ կազմակերպության զարգացումը: Թուրքիան՝ որպես այդ կազմակերպության հիմնադիր պետություն, հենց ինքը չի կատարում ԵԱՀԿ շրջանակներում ստանձնած պարտավորությունները՝ սահմանափակելով իր հարևանների՝ ՄՕՏՀԿ անդամ Հայաստանի և ԵՄ անդամ Գիպրոսի տնտեսական զարգացումը: Վրաստանի առնչությամբ պետք է նշել, որ չնայած Թուրքիայի հետ հաստատված կառուցողական հարաբերություններին, ՄՕՏՀԿ-ի ներսում Ռուսաստանի հետ ստեղծված բարդ հարաբերությունների պատճառով կազմակերպության ներսում արդյունավետ համագործակցություն ծավալել չի հաջողվում: Բացի այդ, առկա են բազմաթիվ տարածայնություններ ՄՕՏՀԿ անդամ պետությունների, մասնավորապես Վրաստանի և Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև:

Թուրք-վրացական համագործակցությունը Սևծովյան օպերատիվ փոխգործակցության ռազմածովային խմբի (BLACKSEAFOR) շրջանակներում երկկողմ ռազմավարական համագործակցության նա մեկ օրինակ է: Այստեղ Թուրքիան և Վրաստանը լիակատար փոխըմբռնման են հասել տարածաշրջանային անվտանգությանը վերաբերող բոլոր հարցերում, բացի այդ, երկու երկրների հարաբերություններում ձևավորվել է շահերի ընդհանրություն Ռուսաստանի կողմից պոտենցիալ սպառնալիքի դեմ:

6. Թուրքիայի աշխարհաքաղաքական հավակնություններն ուղղված են գլոբալ էներգետիկ բաշխիչ դառնալուն, ինչի համար նա փորձում է ներգրավել Վրաստանին՝ որպես իր էներգետիկ քաղաքականության օբյեկտի: Էներգակիրների տարանցումը Թուրքիայի էներգաքաղաքականության կարևոր բաղադրիչն է, որի շնորհիվ նա ձգտում է հասնել իր հավակնոտ նպատակին՝ դառնալ ամբողջ եվրասիական տարածաշրջանի էներգետիկ հաղորդակցության գարկերակը, դրանով իսկ իրականություն դարձնելով ԵՄ-ին անդամակցելու իր

աշխարհաքաղաքական գերնպատակը, ինչպես նաև 2023 թ. դառնալ գլոբալ գերտերություն:

7. ԱՄՆ-ի մտահղացմամբ Թուրքիան պետք է կասեցնի տարածաշրջանում իր դիրքերը վերականգնելու Ռուսաստանի փորձերը՝ առանց ազդեցություն գործելու Հարավային Կովկասի պետությունների քաղաքական վարչակարգերի վրա: Այս դիրքորոշումը կիսում է նաև Եվրոմիությունը, որի կողմից Թուրքիային սիրաշահելը պայմանավորված է շատ կարևոր մի հանգամանքով, դուրս բերել Բալկաններն ու Կովկասը Թուրքիայի ազդեցության գոտուց, դրանով իսկ զսպելով վերջինիս աշխարհաքաղաքական ախորժակը, որը ցանկանում է ամեն գնով պահպանել և հնարավորության դեպքում ընդլայնել ազդեցության գոտիները այդ անկայուն և աշխարհառազմավարական առումով կարևոր տարածաշրջաններում:

8. Թուրք-վրացական հարաբերությունները գլխավորապես բնութագրվում են Թուրքիայի ձգտմամբ՝ տարածաշրջանում ոչ այնքան արևմտամետ, որքան սեփական անկախ քաղաքականություն վարելու ի հաշիվ Արևմուտքի ֆինանսային ռեսուրսների, ինչն արտացոլում է թուրքական արտաքին քաղաքական ռազմավարության իրական պատկերը:

9. Թուրքիան իր արտաքին տնտեսական քաղաքականության մեջ նպատակ է հետապնդում բազմապատկելու արտահանումը և մեծացնելու ներդրումները Վրաստանի կենսապահովման ենթակառուցվածքներում, օրինակ օդանավակայանների արդիականացում ու շահագործում, էներգետիկ, պետական և արտադրական, ինչպես նաև ռազմական օբյեկտների, ավտոմայրուղիների, երկաթուղու շինարարություն, հեռահաղորդակցության ուղիների անցկացում և այլն: Այդպիսով, Թուրքիան ձգտում է վերջնականապես Վրաստանը դարձնել իր համար լիարժեք առևտրատնտեսական հումքային հավելադրյուր:

10. Թուրք-վրացական համագործակցությունը սահմանային-մաքսային ոլորտում բավական հստակորեն ի ցույց է դնում Վրաստանի դերը, որը փաստացի չի վերահսկում Թուրքիայի հետ իր պետական սահմանը, դրանով իսկ որոշակիորեն զրկված լինելով իր իսկ տարածքում իր գերակայությունն սպառնալիքի ինքնիշխան իրավունքից, ինչը, անկասկած, վկայում է վրացական պետության չկայացած լինելու մասին:

Թուրք-վրացական համագործակցությունը տրանսսահմանային ջրային պաշարների օգտագործման ոլորտում ոչ այնքան բնապահպանական, որքան աշխարհաքաղաքական բնույթ ունի, որը կապված է Թուրքիայի աճող դերի հետ, որը ձգտում է հասնել էներգետիկ անկախության և իրականացնել իր քաղաքականությունը տարածաշրջանում, ինչը չի մտնում ԱՄՆ-ի և ԵՄ-ի ծրագրերի մեջ:

11. Թուրքիայի և Ադրբեջանի համար ԿԱԹԲ երկաթուղային նախագծի իրականացումը թույլ կտա նրանց ամրապնդելու իրենց քաղաքական և տնտեսական դիրքերը ոչ միայն տարածաշրջանում, այլև ամբողջ եվրասիական



տարածքում: Վրաստանի համար այն կղաճնա ևս մեկ ապացույց այն բանի, թե ինչպես է միջազգային քաղաքականության սուբյեկտը վերածվում նրա օբյեկտի:

12. Թուրք-վրացական համագործակցությունը ռազմական ոլորտում, ինչպես նաև ՆԱՏՕ-ում, չնայած որակապես էական իրավապայմանագրային բազային և ռազմավարական հարաբերություններին, ամուր հիմքեր չունի, և 2008 թ. «օգոստոսյան ճգնաժամը» ակնհայտորեն ցույց տվեց այդ հարաբերությունների որակական անգործունակությունը, որի հիմնական պատճառը վրացական պետության թույլ և ոչ ինքնուրույն լինելն է:

13. Թուրքիայի քաղաքականությունը Վրաստանի էթնիկ փոքրամասնությունների և ինքնավար պետական կազմավորումների նկատմամբ ունի լուրջ և հեռահար նպատակներ, որոնցում ազգային և էթնիկ փոքրամասնությունների դերը կղաճնա որոշիչ գործոն առհասարակ թուրք-վրացական հարաբերությունների զարգացման հարցում: Ավելին, Թուրքիայի ձգտումները՝ անմիջական ազդեցություն ունենալու Վրաստանի ինքնավար պետական կազմավորումների նկատմամբ, Թուրքիայի գլխավոր աշխարհառազմավարական նպատակներից է, որը նրան հնարավորություն կընձեռի իր շահերը պաշտպանելուն ուղղված քաղաքականություն իրականացնել տարածաշրջանի մասշտաբով:

#### Ատենախոսության թեմայով հեղինակը հրատարակել է հետևյալ աշխատությունները.

1. Հովհաննիսյան Գ. Հ., Վրաստանի դերակատարումը ՎՈՒԱՄ-ի տարածաշրջանային և միջազգային գործունեության ոլորտում // 21-րդ ԴԱԸ. Տեղեկատվական-վերլուծական հանդես, Եր., 2010. թիվ 2(30), էջ 102-113:
2. Оганесян Г. О., Грузия и НАТО // 21-й век: Информационно-аналитический журнал №4(16), Ер., 2010. С. 109–121.
3. Оганесян Г.О., Из истории турецко-грузинских отношений // 21-й век: Информационно-аналитический журнал №1(17), Ер., 2011. С. 85–90.
4. Оганесян Г.О., Турецко-грузинские отношения в сфере трансграничных водных ресурсов // 21-й век: Информационно-аналитический журнал №3(19), Ер., 2011. С. 84–89.
5. Оганесян Г.О., Политика Турции и Грузии в отношении проблемы тюрко-месхетинцев // «Կանթեղ», Եր., 2011, թիվ 3 (48), էջ 169-177.

## ОГАНЕСЯН ГОР

### ТУРЕЦКО-ГРУЗИНСКИЕ ОТНОШЕНИЯ В КОНТЕКСТЕ РЕГИОНАЛЬНОЙ ПОЛИТИКИ (1991–2008гг.)

#### РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию турецко-грузинских отношений в контексте региональной политики (1991-2008гг.).

В первой главе диссертации «Роль и место Грузии во внешней политике Турции», автор рассматривает и анализирует основные тенденции становления и развития турецко-грузинского политического диалога. В частности, сжато представлен историко-политический анализ турецко-грузинских отношений, в котором выявлены начальные этапы формирования данных отношений.

Рассмотрено также возросшее геополитическое значение региона Южного Кавказа, дан анализ процессов становления и развития турецко-грузинских отношений в постсоветский период, с последующим выявлением фактов и событий направленных на установление турецко-грузинского сотрудничества.

В главе рассмотрен также дальнейший период установления турецко-грузинского стратегического партнерства, проводится анализ методов и ресурсов влияния Турции, США, ЕС, НАТО и России на внешнеполитический процесс Грузии, дается оценка эффективности влияния упомянутых акторов на политический процесс в регионе.

Автором также рассмотрена и аналитически представлена реакция Турции на «августовский кризис» 2008 года в Грузии. Отмечается, что представленный Турцией «Пакт стабильности и сотрудничества на Кавказе» был своего рода попыткой стать возможным незаинтересованным арбитром и посредником в разрешении конфликтов в регионе.

Во второй главе «Многовекторное сотрудничество Турции и Грузии», автор представляет турецко-грузинское сотрудничество в различных сферах. В частности, дан общий обзор геоэкономической ситуации в регионе, где автор



представляя экономическую стратегию Турции в Грузии, указывает, на очень своеобразный выбор Турцией сфер-областей, в которых она стремится быть вовлеченной в Грузии, что явно выражает скрытую цель, состоящую в достижении контроля над всей экономической деятельностью страны, а также превращения Грузии в своеобразный сырьевой придаток, для своей экономики.

В главе также исследована роль Турции и Грузии в реализации энергетического потенциала региона, отдельно выявлена энергополитика Турции и энергополитика Грузии, в контексте которых, анализируется динамика становления и развития международных энергопроектов Баку–Тбилиси–Джейхан и Баку–Тбилиси–Эрзрум, где оба государства проводят почти что согласованную энергополитику, пытаясь одновременно решить две насущные политические проблемы: преодолеть собственную проблему с дефицитом энергоресурсов и стать энергетически пульсирующей артерией в регионе.

Автором рассмотрены также причины обуславливающие интерес Турции и Грузии в реализации железнодорожного проекта Карс-Ахалкалаки-Тбилиси-Баку, в рамках региональной политики. В частности, представлены различные позиции Турции и Грузии в отношении проекта, который является в основном турецко-азербайджанским геополитическим проектом, направленным на изоляцию Армении, России, а также Ирана.

Выявлена роль и значение Турции в сотрудничестве с Грузией в таможенно-пограничной сфере, где Грузия, по мнению автора, фактически передала главному военному ведомству Турции функции своего государственного пограничного контроля.

В главе, автор отдельно рассматривает одну из основных проблем существующих в турецко-грузинских отношениях – проблему разграничения трансграничных водных ресурсов, которая занимает одну из важных тем во внешнеполитической повестке Турции и Грузии и, которая, еще не получила своего решения.

Отдельно представлен процесс становления и развития турецко-грузинского военного сотрудничества, где выявлены стратегические цели Турции в отношении Грузии в контексте региональной политики.

В главе также рассмотрено турецко-грузинское сотрудничество в черноморских региональных организациях (ОЧЭС, BLACKSEAFOR и др.), где выявлены стремления Турции обеспечить за собой первенство в регионе. Отмечается, что несмотря на сложившиеся конструктивные отношения с Грузией в рамках региональных организаций, Турции так и не удалось достичь стратегической цели – стать проводником региональной политики.

**В третьей главе «Взаимоотношения Турции с этническими меньшинствами и автономными государственными образованиями Грузии»,** анализируется динамика этнополитических конфликтов в Грузии, выявляются цели и определяется позиция Турции в вопросе их урегулирования, представлена политика Турции в отношении этнических меньшинств, а также автономных государственных образований Грузии в контексте региональной политики.

Представлены также процессы становления и развития отношений Турции с автономными государственными образованиями Грузии. Тем самым по мнению автора, политика Турции в отношении этнических меньшинств и автономных государственных образований Грузии имеет серьезные и далеко идущие планы, в которых роль последних станет определяющим фактором в становлении и развитии турецко-грузинских отношений в целом.

В заключительной части диссертации обобщены результаты исследования и основные выводы.



**TURKISH-GEORGIAN RELATIONS IN THE CONTEXT OF REGIONAL POLICY  
(1991–2008 yy.)**

**RESUME**

The thesis is devoted to study of the Turkish-Georgian relations in the context of regional policy (1991–2008 yy.).

**In the first chapter of the dissertation – “The role and place of Georgia in foreign policy of Turkey”**, the author examines and analyzes the main trends of formation and development of the Turkish-Georgian political dialogue. In particular, it is briefly presented the historical and political analysis of the Turkish-Georgian relations, which revealed the initial stages of formation and development of these relations. It was also considered the increasing geopolitical importance of the South Caucasus region, was given an analysis of the processes of formation and development of the Turkish-Georgian relations in the post-Soviet period, followed by the revelation of facts and events which were directed to establish the Turkish-Georgian cooperation.

In the chapter also examined further period of the period of establishment of the Turkish-Georgian strategic partnership, the analysis of methods and recourses of influence of Turkey, USA, EU, NATO and Russia on the foreign policy process of Georgia, it was estimate the effectiveness of the influence of the mentioned actors in the political process in the region. The author also examined and analytically presented Turkey’s reaction to “the august crisis” in 2008 in Georgia. It is noted that “Pact of Stability and Cooperation in the Caucasus”, which was presented by Turkey, was sort of like an effort to become a disinterested arbitrator and mediator in resolving conflicts in the region.

**In the second chapter “Multi-vector cooperation between Turkey and Georgia”**, the author presents the Turkish-Georgian cooperation in various spheres. In particular, a general overview of the geo-economic situation in the region was given, where author presenting the economic strategy of Turkey and Georgia, points out a very peculiar choice by Turkey of sphere-areas, in which it seeks to be involved in Georgia, which clearly

expresses the hidden goal of achieving control over all economic activities of the country, and also turning it into a kind of raw material appendage to its economy.

In the chapter also investigated the role of Turkey and Georgia in realization the energy potential of the region, separately revealed energy policies of Turkey and Georgia, in context of which, it analyzes the dynamics of formation and development of international energy projects of the Baku–Tbilisi–Ceyhan and Baku–Tbilisi–Erzurum, where both states conduct nearly that coordinate energy policy, while trying to solve two vital political problems – to overcome it’s own problem with deficit of energy resources and to become a throbbing energy “artery” of the region.

The author also considers the reasons causing the interest of Turkey and Georgia in the implementation of Kars–Akhalkalaki–Tbilisi–Baku railway project, in the context of regional policy. In particular, it presents the different positions of Turkey and Georgia on the project, which is basically a Turkish-Azerbaijani geopolitical project aimed to isolate Armenia, Russia and Iran.

It is also revealed the role and significance of Turkey in cooperation with Georgia in customs and border sphere, where Georgia, in author’s opinion, was gave the main military department of Turkey functions of it’s state border control.

In the chapter, the author separately considers one of the main problems existing in the Turkish-Georgian relations – the issue of transboundary water resources division, which holds one of the important issues in Turkish and Georgian foreign policy agenda, and which had not received a decision yet.

Separately, it is presented the process of formation and development of the Turkish-Georgian military cooperation, it is revealed the strategic objectives of Turkey to Georgia in the context of regional policy.

In the chapter it was also examined the Turkish-Georgian cooperation in the Black Sea regional organizations (BSEC, BLACKSEAFOR and etc.), where revealed the desires of Turkey to provide for a primacy in the region. However, the author notes that despite the existing good relations with Georgia within the framework of regional organizations, Turkey failed to achieve the strategic goal – to become a conductor of regional policy.


**In the third chapter “The relationship between Turkey and ethnic minorities and autonomous governmental entities of Georgia”**, an analyses the dynamics of ethno-political conflicts in Georgia, it is reveals goals, and it is determines the position of Turkey



in the question in their settlement, it is presented policy of Turkey in relation to national and ethnic minorities, as well as autonomous governmental entities of Georgia in the context of regional policy. It is presented also processes of formation and development relations of Turkey with the autonomous governmental entities of Georgia.

Thus, in author's opinion, Turkey's policy towards ethnic minorities and autonomous governmental entities of Georgia, has serious and far-reaching plans in which their role will be the determining factor in the development of the Turkish-Georgian relations in general.

In the final part of the thesis it is summarized the findings and main conclusions.

A handwritten signature in black ink, appearing to be 'G. G. G.', with a long horizontal stroke extending to the left.